600.0237.08.07.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 հուլիսի 2020 թվականի №237Ա
ք.Երևան

«ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հոկտեմբերի 31-ի №405Ա որոշմամբ «ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Որոտան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ինչը, սակայն, Ընկերության կողմից չի կատարվել, որի արդյունքում նշված ժամկետը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի մարտի 1-ը,

բ) Ընկերությունը 2020 թվականի փետրվարի 28-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման 2-րդ կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի 9-րդ

կետի 2-րդ ենթակետի և 13-րդ կետի բովանդակությունից բխում է, որ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների կամ օրենքով նաև շրջակա միջավայրի պահպանության վրա ազդեցության փորձաքննություն պահանջող քաղաքաշինական փաստաթղթերը, ինչպիսին ըստ էության հանդիսանում է Կայանի կառուցման նախագիծը, ենթակա են պետական համալիր փորձաքննության, որի եզրակացությունը ընկերության կողմից չի ներկայացվել,

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ սույն թվականի մայիսի 18-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

ե) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի հունիսի 11-ի №Շ-21 գրությամբ տեղեկացրել է, որ քննարկվող հարցի առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով 2020 թվականի մայիսի 20-ի №Շ-15 և հունիսի 10-ի №Շ-20 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե: Նշվածը հաշվի առնելով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը, ինչպես նաև առկա փաստական հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պարզաբանումները ստանալու համար, հարուցված վարչական վարույթի ժամկետը երկու անգամ 10-ական օրով երկարաձգվել է,

զ) Ընկերությունը 2020 թվականի հունիսի 24-ի №Շ-22 գրությամբ ներկայացրել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2020 թվականի հունիսի 3-ի №06/11.1/3686-2020 գրությունը, համաձայն որի Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման պահանջների համաձայն, ըստ էության, ենթակա են պետական համալիր փորձաքննության,

է) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի կառուցման նախագիծը դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ը) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի կառուցման նախագիծը դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

թ) վարչական վարույթի շրջանակում իրավասու պետական մարմնի դիրքորոշման հիման վրա փաստվել է, որ Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման պահանջների չեն ենթարկվել պետական համալիր փորձաքննության և չեն կարող համարվել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծ՝ դրական փորձագիտական եզրակացություններով, այսինքն, Ընկերությունը ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի մարտի 1-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական

եզրակացություններով, որի արդյունքում դրա ներկայացման ժամկետը համարվել է երկրորդ անգամ երկարաձգված՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի մարտի 1-ը, Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու համար սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 8-ի №5452/08 գրությամբ Հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված 13,800,000 (տասներեք միլիոն ութ հարյուր հազար) դրամ գումարից 6,895,000 (վեց միլիոն ութ հարյուր իննսունհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 13,790,000 (տասներեք միլիոն յոթ հարյուր իննսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2021 թվականի դեկտեմբերի 16-ը գործողության ժամկետով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.
   1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0624 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված՝ մինչև 2020 թվականի նոյեմբերի 1-ը,
   2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան

փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0624 լիցենզիայի գործողությունը կկասեցվի,

3) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
8 հուլիսի 2020թ.